



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 23855 « 27 » 12 201 6թ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2016Թ. ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 67831  
ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԵՎ ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
70-րդ հոդվածի պահանջներով.

հրամայում եմ.

1. Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2016թ. ապրիլի 18-ի թիվ 67831  
հրամանով հաստատված «ԵՊՀ սովորողների մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի  
վերահանձնման ընթացակարգի» 3.7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ  
բովանդակությամբ.

«3.7. Մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման  
հանձնաժողովների կազմում ընդգրկվում են՝

ա) ամբիոնի վարիչը, կամ նրա կողմից (զեկուցագրով) առաջարկված տվյալ ամբիոնի  
պրոֆեսորը կամ դոցենտը՝ հանձնաժողովի նախագահ,

բ) տվյալ դասընթացը կամ գործնական ժամերը վարող դասախոսը,

գ) ֆակուլտետի ներկայացուցիչը՝ դեկանը (դեկանի տեղակալը) կամ նրա կողմից  
(զեկուցագրով) առաջարկված անձը:

դ) ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչը՝ ըստ անհրաժեշտության:»:

2. Սահմանել, որ լուծարքային քննաշրջանի քննական հանձնաժողովները ձևավորվում  
են սույն հրամանի 1-ին կետով սահմանված կազմով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ-ի ֆակուլտետներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Ա.Հ.ՍԻՄՈՆՅԱՆ